ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

**ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

**22 -18**

« 12» փետրվարի 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 6-ի թիվ 4 որոշումը, փետրվարի 8-ի թիվ 5 որոշումը և փետրվարի 9-ի թիվ 6 և 7 որոշումները

Առդիր 4 թերթ:

Վահագնի համայնքի ղեկավար Պ.Քոչինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 4

«06» փետրվարի 2018թ

## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածով և Վահագնի համայնքի ավագանու 2018թ փետրվարի 06-ի «Վահագնի համայնքի 2018 թ.-ի բյուջեն հաստատելու մասին » թիվ 5 որոշմամբ.

**որոշում եմ.**

Հաստատել Վահագնի համայնքի 2018թ. բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը :

Վահագնի համայնքի ղեկավար ____________ Պ. Քոչինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« 08 » փետրվարի 2018 թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 5

## ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԵՑՄԱՆ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն 08.04.2004 թվականի թիվ 456-Ն որոշումներով `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Վահագնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի թիվ 456-Ն որոշման 4-րդ հավելվածով փոխանցված 296-րդ եզրագծի տակ, կադաստրային քարտեզի 06-103-0070-0001 ծածկագրով բնակավայրերի այլ հողերից առանձնացված 0.1516 հա հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:

2. Վահագնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող, 06-103-0070-0001 ծածկագրով բնակավայրերի այլ հողերից 0.1516 հա առանձնացնել, որպես առանձին միավոր: Հողամասին տրամադրել գ. Վահագնի 1-ին փողոց 3-րդ նրբանցք թիվ 13/1 փոստային հասցեն:

3. Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշմից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար Պ. ՔոչԻՆյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ»
ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 6

«9» փետրվարի 2018թ.

## Սեփականության վկայականում հասցեի սխալի ուղղում կատարելու մասին

Հիմք ընդունելով Վահագնի համայնքի բնակիչ Արմեն Նորիկի Ներսիսյանի դիմումը , սեփականության իրավունքի գրանցման թիվ 731203 , թիվ 731200, թիվ 727657, թիվ 727955, թիվ 727957 և թիվ 727956 վկայականները , Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով , հաշվի առնելով քարտեզագրման ժամանակ տեղի ունեցած սխալը և տրամադրված քաղվածքում տեղ գտած սխալը .

Որոշում եմ՝

1. Թիվ 731203, թիվ 731200 , թիվ 727657, թիվ 727955, թիվ 727957 և թիվ 727956 սեփականության իրավունքի վկայականներում գրված «Աստղիկ»- ի փոխարեն կարդալ «Աստղենիկ», իսկ թիվ 731200 և թիվ 731203 սեփականության իրավունքի վկայականներում գրված «Արեն»- ի փոխարեն կարդալ « Արմինե » :
2. Դիմել անշարժ գույքի կադաստրի Վանաձորի տարածքային ստորաբաժանում վկայականի մեջ ուղղում կատարելու համար :

**Վահագնի համայնքի ղեկավար** ____________________ **Պ. Քոչինյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՀԱԳՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 7

*«09» փետրվարի 2018 թ*

**Վահագնի համայնքի 06-103-0027-0013 ծածկագրի տնամերձ հողամասին և տանը փոստային հասցե տրամադրելու մասին.**

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով. «ՏԻՄ» օրենքի 38-րդ հոդվածով,*

*որոշում եմ*

1. *06-103-0027-0013 ծածկագրի տնամերձ հողամասին և տանը տրամադրել փոստային հասցե գ. Վահագնի 4-րդ փողոց 1-ին փակուղի 13 :*
2. *Որոշումը ենթակա է գրանցման ԱԳԿՊԿ-ի Վանաձորի ստորաբաժանամում :*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Պ. ՔՈՉԻՆՅԱՆ